ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/164

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՍՈՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Սահակովի (իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.06906)

Ներկայացուցիչ՝ Ա. Միքաելյանի

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ա. Բազեյանի (լիազորագիր, տրված՝ 03.10.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15868-2019 գրությամբ «Յդկադ» և «ՍՈՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.09.2019թ. թիվ Ե/01/148-19 գրության հիման վրա, 26.09.2019թ. թիվ 26/26-1/15868-2019 գրությամբ նախաձեռնել է «Յդկադ» և «ՍՈՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ

ընկերություններին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Յդկադ» և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.09.2019թ. գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/76/77/78/79» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) 1-ին չափաբաժնին համատեղ մասնակցելու նպատակով «Յդկադ» ՍՊԸ-ն՝ որպես գործընկեր 1 և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ն՝ որպես գործընկեր 2, կոնսորցիումով 09.01.2019թ. կնքել էին համատեղ գործունեության պայմանագիր N 5-ը: Սակայն գործընկեր 1-ի կողմից գործընկեր 2-ին չեն տրամադրվել վերջինիս պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ պայմանները և աշխատանքային տարածք, որից կախված էր գործընկեր 2-ի պարտականությունների կատարումը: Գործընկեր 2-ը՝ «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ն հիմնվելով գործընկերների պայմանագրի 7.2 կետի վրա՝ 09.04.2019թ. գրությամբ դիմել է գործընկեր 1-ին՝ «Յդկադ» ՍՊԸ-ին վերոհիշյալ ծածկագրով մրցույթով նախատեսված իր մասնակցության դադարեցման վերաբերյալ, որը 09.04.2019թ. ընկերության տնօրեն Վ. Գևորգյանը ստացել է՝ հավաստելով իր ստորագրությամբ և կնիքով:

Հիմք ընդունելով ընկերության կողմից ներկայացված հիմքերը՝ «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ն խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Յդկադ» և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/164 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ն ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.09.2019թ. թիվ Ե/01/148-19 գրությամբ հայտնել է, որ «Յդկադ» ՍՊԸ-ի և «ՍՌՍ -Զվեզդա» կոնսորցիումի հետ ս.թ. փետրվարի 05-ին կնքել է պետական գնման «ՀՀ Վայոց Ձոր «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման/առանց տանիքի» թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» ծածկագրով պայմանագիրը: «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 2019թ. հուլիսի 19-ը:

Սակայն Կապալառուն սահմանված ժամկետում չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Հիմք ընդունելով կողմերի միջև կնքված պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (բ) ենթակետի և 6.3 կետի դրույթները, Պատվիրատուն լուծված է համարել 05.02.2019թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/164 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Յդկադ» և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 05.02.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» ծածկագրով պայմանագիր (հետայու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Կոնսորցիումը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով

սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման /առանց տանիքի/» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Կոնսորցիումին ուղղված 15.08.2019թ. թիվ 15/8-673 գրությամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.4 կետի 3.1.4-րդ կետի «բ» ենթակետը՝ լուծում է 05.02.2019թ. կնքված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» ծածկագրով պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15868-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.09.2019թ. թիվ Ե/01/148-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Յդկադ» և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 05.02.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Կոնսորցիումը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման /առանց տանիքի/» աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 27 480 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի 8.15-րդ կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Կողմերի միջև 19.02.2019թ. կնքվել է Պայմանագրի N 1 համաձայնագիրը, որի 1-ին կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 150 օր:

«Յդկադ» ՍՊԸ-ին ուղղված 29.04.2019թ. գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ շին. աշխատանքների կատարման որակը և տեմպերը գոհացուցիչ չեն, ինչը վտանգում է ծրագրի ավարտը Պայմանագրով նախատեսված ժամանակին՝ 19.07.2019թ.:

Նույն գրությամբ Պատվիրատուն հանձնարարել է մինչև 02.05.2019թ. ընկած ժամանակահատվածում վերացնել տեխ. հսկողի կողմից նշված թերություններն ամբողջությամբ:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն նախազգուշացրել է, որ եթե 19.07.2019թ. չավարտվեն օբյեկտի շին. աշխատանքները, ապա ՀՏՋՆ-ն իրեն իրավունք կվերապահի կիրառել Պայմանագրով նախատեսված բոլոր տույժերը:

Պատվիրատուն «Յդկադ» ՍՊԸ-ին ուղղված 27.05.2019թ. գրությամբ կրկին հայտնել է, որ շին. աշխատանքների կատարման որակը և տեմպերը գոհացուցիչ չեն, ինչը վտանգում է ծրագրի ավարտը Պայմանագրով նախատեսված ժամանակին:

Նույն գրությամբ Պատվիրատուն նախազգուշացրել է, որ եթե մինչև 03.06.2019թ. ընկած ժամանակահատվածում չվերականգնվի շին. աշխատանքների նորմալ ընթացքը, ապա ՀՏՋՀ-ն իրեն իրավունք է վերապահում լուծել Պայմանագիրը և կիրառել Պայմանագրով նախատեսված բոլոր տույժերը և տուգանքները:

Գործում առկա է նաև «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրինության հայտարարությունն առ այն, որ մանկապարտեզում կատարվող շինարարական աշխատանքների ժամանակ մանկապարտեզի ավագ խնբում (որը վերանորոգված էր և չէր ընդգրկվել վերանորոգման աշխատանքների մեջ), առաջացել են ճաքեր, խոնավությունից թափվել են առաստաղի և խոհանոցային մասի ծեփերը: Կոտրել

են մուտքի և միջին խնբի դռները, որոնք տեղադրվել էին համապատասխանաբար 2015 և 2017թթ.:

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կողմերի միջև կնքված ակտի համաձայն՝ 09.07.2019թ. Կոնսորցիումի կողմից հանձնվել, իսկ Պատվիրատուի կողմից ընդունվել է 4 623 307 ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ:

Կոնսորցիումին ուղղված 15.08.2019թ. թիվ 15/8-673 գրությամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները ժամանակին չեն իրականացվել և դրանց որակի և ընթացքի մասին Պատվիրատուի կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ, ինչպես նաև այն, որ մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտն իրականացվել է նախատեսված աշխատանքների ընդամենը 17 տոկոսը, որի համար Կապալառուին 11.07.2019թ. վճարվել է 4 392 142 ՀՀ դրամ և հիմք ընդունելով Պայմանագրի 3.4 կետի 3.1.4 ենթակետի «բ» ենթակետը Պայմանագիրը համարել է լուծված:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Կոնսորցիումը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Կոնսորցիումը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացրել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Պայմանագրի 8-րդ կետի 8.7 ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ առկա են «Յդկադ» և «ՍՈՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15868-2019 գրությամբ «Յդկադ» և «ՍՈՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերություններին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Յդկադ» և «ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**